

և Օսմ. կառավարութիւնը մինչև 1836 կը ճանչնար միայն մէկ ազգ, և Հայ-կաթողիկէները կը համարէր յարանուանութիւն մը, ինչպէս այսօր Բողոքական ընդհանուր հաստատմին տակ կառավարութիւնը միայն անպաշտօն կերպով կը ճանչնայ Յոյն-Բողոքականներու, Պուրկար-Բողոքականներու, կամ Շարաթապահներու, Մկրտչականներու եւլն. բաժանումները, որոնք իրեն համար քաղաքական կազմ չունին:

Մենք, միացումը իրական ու տեւական և միանգամայն հաստատուն դարձնելու համար, կը փափաքէինք որ ազգը՝ իր քաղաքական մարմին՝ ունենար ճիշդ այն վիճակը, ինչ որ ունէր 1836 էն առաջ, երբ էր կազմուած Հայ-կաթողիկ Պատրիարքութիւնը:

ԱՐՔԱՅ ՎԵՏԱՍՄԵԱՆ



Հայ Ոսկերչաց Յօրեկանական Կորոզը (\*)

### Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

#### ՅՈՐԵԿԱՆԱԿԱՆ ՀԱՆՂԵՆՆԵՐԸ

Յօրեկանական Հանդէսները, Հոկտ. 11, 12 և 13ին մեծաշուք կերպով տեղի ունեցան աշխարհի ամէն կողմը, սկսելով Ս. Էջմիածնի Մայր Աթոռէն, Օշականէն, և Տփղիսի ու Ռուսահայոց բոլոր քաղաքներէն և աւաններէն, մինչև Պոլիս եւ թուրքիոյ ամենէն հեռաւոր անկիւնները, կիլիկիոյ մեծ ու պզտիկ քաղաքները և Արտասահմանի մէջ ամէն ուր որ Հայ դպրութ մը կայ: Օրաթերթիքը լեցուն են մանրամասնութեամբ այդ հանդէսներուն, և պատճէններովը առաւել կամ նուազ թեւադրող բանախօսութիւններուն, որոնք

եղան նոյն միջոցին: Դժբախտաբար Պոլսոյ Մայր-եկեղեցւոյն՝ թէ Թիֆլիզի Ներսէսեան վարժարանին մէջ, և քիչ մըն ալ ամէն կողմ, ժողովուրդը ցոյց առաւ անկարգապահ ոգի, որ ստուեր ամեց Հայ ժողովուրդին՝ բարեմոյն, քաղաքակիրթ ազգ մ'ըջալու համբաւին վրայ: Խանդավառութիւնը չափ ու սահման չունէր Պոլսոյ թաղերուն և արուարձաններուն մէջ: Դժբախտաբար դրական արդիւնքը տաքապայման կերպով խտտորնակ կը համեմատի ցոյց արուած ոչեւորութեան: Հակառակ որ Ազգ. ժողովը Հոկտ. 11ի հանդիսաւոր նիստին մէջ բացուած հռչակեց կրթական փոխի համար կատարուելիք նուիրահաւաքութիւնը, և այս նպատա-

(\*) Արտատպուած Կոնակէն:

կով կազմուած Յանձնատնօրոյն ալ՝ Ստե-  
նապետութեամբ Արշակ էֆ. Գարակէօղ-  
եանի և Գանձապետութեամբ Մ. Իրքանտու-  
եան էֆ.ի, կազմակերպուած է արդէն, և  
սակայն՝ այսօր, հանդէսներէն տաննեհինդ  
օր վերջը, տակաւին սկզբնաւորութիւն մը  
խիչ չկայ յիշատակելի նուիրատուութեան  
մը, բայց ի Յորելեանի օրերը թաղերու  
մէջ կատարուած հանգանակութեանց եւ  
փօխոսներու, պատկերներու եւլն. վաճա-  
ռումով գոյացած արդիւնքէն, որուն եւս  
վերջապէս ինչ դումարի մը յանդերձն  
մասին տեղեկութիւն չկայ: Ամէն պարա-  
գայի մէջ չի կարծուիր որ ցարդ հաւաք-  
ուած դումարը 1000 ոսկիէն շատ աւելի  
մեծ ըլլայ:

Յերկուս կայր շեռնե անագին  
... եւ ևս ձնաւ մուկն չեյին:

Եւ սակայն մենք վճատած չենք, կը  
սիրենք յուսալ որ Թրքահայը պիտի գիտ-  
նայ արժանաւոր մասնակցութիւն մ'ու-  
նենալ մեր Կովկասահայ եղբարց ձեռնար-  
կած մեծ նուիրահաւաքութեան, որ ազ-  
դին միաքի լուսաւորութիւնը ունի իրեն  
նպատակ (\*): Այս նուիրահաւաքութեան  
մէջ փայլուն օրինակ մը կ'ընծայէ Քիչնեւի  
թեմակալ Տ. Ներսէս Արքեպս. Խիւտա-  
վէրտեան, որ 100,000 բուրլի նուիրած է  
Կրթական ֆոնտին: Թրքահայ եկեղեցակա-  
նութեան մէջ չենք կարծեր որ դանուի  
միակ եկեղեցական մը, որ այդպիսի իշ-  
խանական նուիրատուութիւն մը ընելու  
վիճակին մէջ ըլլայ. բայց փափաքելի է  
որ հաւաքական մասնակցութիւն մը ու-  
նենայ, որքան ալ համետ սահմանի մէջ  
ըլլայ: Այս ուղղութեամբ յիշատակութեան  
արժանի է Տ. Բարդէն Եպս.ի նուիրա-

տուութիւնը՝ 500 ոսկի արժողութեամբ  
իր մատենադարանին՝ Կիլիկեան ձեւարա-  
նին, որուն հանդիսաւոր բացումը կա-  
տարուած է Յորելեանի օրը: Այդ առթիւ  
Տ. Փառէն Ծ. Վ. իր 5000 ֆր.ի ապա-  
հովադութիւնը յատկացուցած է ձեռն-  
բանին, և 1000 ոսկի նուիրած է Սարգիս  
էֆ. Կ. Նազարեան: Ուրիշ նուիրատու-  
ութիւններով՝ Կիլիկեան ձեւարանի ի  
նպատտ նուիրահաւաքութիւնը յանգած է  
2500 ոսկիի: Մխիթարական երեւոյթ մըն  
է այս: Եւ նոյնքան մխիթարական՝ ի պա-  
տիւ Հայկական Մեծ Տօնին՝ Խարբերդի մէջ  
Հայկական ձեւարանի մը հաստատումը,  
զոր հեւագրաւ ծանուցած է տեղւոյն ժը-  
րաջան Առաջնորդ Տ. Պսակ Ծ. Վ.: Միւս  
կողմէ ջերմ դոճուհակութեամբ լսեցինք  
Միացեալ Ընկ. դիտումը՝ Ս. Մեքորպի  
ծննդավայր Հացիկաց գիւղին մէջ վարժա-  
բան մը հաստատելու: Վանէն հասած տե-  
ղեկութեան մը մէջ ալ ամենամեծ հաճոյ-  
քով կարգացինք թէ Յորելեանական շքեղ  
հանդէսներու միջոցին, բացումը կատար-  
ուեր է Վարժապետանոցի նոր շէնքին,  
զոր ի դուրս հանած է սղբացեալ Պետրոս  
պէյ Գարամաճեանի որդին Սէթ էֆ., որու  
համար եղած 1000 ոսկի ծախքին 700 ոս-  
կին վճարած է Վանեցի ժողովուրդը, և  
300 ոսկի ծախսած է Սէթ էֆ., զոր  
նուիրած է Ազգին: Հազար ապրի:

Այս բոլորը անշուշտ գոհացուցիչ են  
են և կը մատնանշեն լուրջ շարժում մը  
ի նպատտ ազգային կրթութեան: Բայց  
Յորելեանական Հանդէսներու արդիւնքը,  
և այդ առթիւ կատարուելիք հանգանա-  
կութեան ամբողջութիւնը, — զոր պատ-  
ուարեր դումարի մը յանդեցնելու համար  
ամէն գոհողութիւն անհրաժեշտ է ընել, —  
պէտք է դրկուի անհրաժեշտագէտ Ս. Էջ-  
միածին, բարդուելու համար Կովկասահայ  
եղբարց հանգանակած դումարին: Ասիկա  
անխուսափելի է, եթէ Ազգ. համերաշխ  
միութիւնը զուր բառ մը չէ:



Ազգ. ժողովը վերջին Ուրբաթի  
(Հոկ. 25) նիստին մէջ, — որու միջոցին  
վերակազմուեցան Համարակալութեան,  
Դաստիարակութեան և Նախաձեռնութեան

(\* Կարելի չէ հաւատ ընծայել այն զրոյցին  
Յէ Թրքահայց մէջ փափար կայ կատարուելիք  
հանգանակութեան արդիւնքը յատկայնել Թրքա-  
հայց կրթական պէտքերուն, առանց հաւարած  
գումարը Ս. Էջմիածին դրկելու: Ընդհակառակն  
այս գերագոյն առթիւ Հայութիւնը պէտք է ցուցնէ  
Յէ ի սիւստ աշխարհի ցրուած իր անդամները  
մաս կը կազմեն այն միանոյլ, անանջատ մարմ-  
նոյն որ Հայ Ազգ կը կոչուի: Կրթական ճօնը  
պէտք է Ս. Էջմիածին հաւարուի, եւ անկէ՛ հո-  
գացուին ամէն կողմի ստիպողական պահանջները:

գիւանները, — զբաղեցաւ Երուսաղէմի կանոնադրին քննութեամբ, և ընդունեց 1, 2, 3, 5 և 6 յօդուածները՝ կարգ մը սրբազրութիւններով, որոնց մեծ մասը որոշուած էին Երեսփ. մասնաժողովոյ խորհրդակցութեանց պահուն: Այդ սրբազրութեանց մէջ նշանակելի են «Աւազ դպիր»ներու (՝) վերցուիլը Միաբանութեան շարքէն, վանական սեղանի պահպանութիւնը, և միաբանաց որոշեալ 70 թիւէն պակասներու տեղ նորերու ընտրութեան կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ վաւերացման ենթարկուիլը:

— Երուսաղէմի Խնամակալութիւնը վերջնապէս կազմուած է Ամեն. Դուրեան Արքեպ. է, Արամ Հալաճեան, Գէորգ Թորգոմեան, Հայկ Անտոնեան էֆ.ներէ: Ազգ. Վարչութիւնը մտադիր է ընդհուպ որոշել Երուսաղէմ զրկուելիք բարձրատիճան եկեղեցական մը, դեռինք պատրաստելու համար կանոնադրի գործադրութեան: Կը խօսուի Ամեն. Օրմանեան Ս.ի վրաց, որ ուրախ ենք ծանուցանելու թէ կատարելապէս աւողջացած է իր վերջին նիւանդութիւնէն, և և վերսկսած իր հոյակապ Ազգապատմութեան հրատարակութեան: Գէորգ Թորգոմեան և Հայկ Անտոնեան էֆ.ները ևս պատրաստակամութիւն կը յայտնեն իրենց ծախքով Երուսաղէմ ուղևորելու:

— Ասաբազարի մէջ Յորելեանական թափօրի միջոցին պատահած դէպքին հետեւանօք ամբաստանեալ և Պոլիս բերուած անձերէ ոմանք ծանր և ոմանք թեթեւ պատիժներու դատապարտուեցան Պոլսոց զինուորական Ատեանին կողմէ: Պատր. Տեղապահ Ս.ը և Վարչութեան Ատեանապետ էֆ.ն, նաև Վարդգէս և Զօհրապ էֆ.ները զիմուսներ կատարեցին անոնց ներման համար, և խոստումներ առին:

— Սանասարեան վարժարանի՝ բարեբաբին դրամով զնուած Ազգիբանի ազարակը, որ գրաւուած էր Լազերուն կողմէ երկար տարիներէ ի վեր, վերջապէս վերադարձուեր է վարժարանին:

— Հայկ. Բ. Բ. Միութեան կողմէ երկրորդ անգամ 75 ոսկի զրկուած է Միացեալ Ընկ. միջոցաւ կիլիկիոյ հինգ վար-

ժարաններուն ի նպաստ: Նոյնպէս 50 ոսկի Այնթապի միախնարուհի Տիկ. Շէքրբաի՝ Հաճընի մէջ բացուելիք ձեռագործի արհեստանոցին իբր Ա. մասնավճար: 800 Ֆր. և ևս զրկուած է Տիգրիսարանի Պ. Ե. Լաւականցի, յօդուած Հայկ. ձեռագրաց:

Ս. Պատրիարք կարին շարաթ մը մնալէ ետքը ճամբայ ելած է դէպ ի Տրապիզոն, Բարեբաբի ուղևորով: Դժ. օր մայքազաքէս մեկնեցան Տ. Մաղաքիա Եպ. Տէրունեան, և Յ. Զէքի և Յ. Պոյաճեան էֆ.ները դէպի Տրապիզոն, առաջնորդելու Ն. Սրբազնութիւնը Պոլիս իր Աթոռը:

— Զմիւռնիոյ Առաջնորդ Տ. Մատթէոս Ծ. Վ. Ինձէեան որ Եւրոպա գացած էր, Բարիզի մէջ պատարագեր և քարոզեր է: Ն. Գերասպատուութիւն որ անցեալ շաբթու Պոլիս եկած էր, մէկ երկու օր մնալէ ետքը դարձաւ Իզմիր:

— Մ. Ընկերութեան Տնօրէն Ժողովը իր վերջին նիստին մէջ պատուոյ անդամ ընտրած է Արամ էֆ. Հալաճեանը, որ Ընկերութեան վերակազմութեան ի դեր կարեւոր ծառայութիւններ մատուցած է, մասնաւորապէս անձեռնմխելի դրամազուտի կազմութեան առթիւ:

— Օրբաֆեօյի Աւագերէց Տ. Վրդանէս Ա. Քնյ. Պալեան վախճանեցաւ Հոկտ. 17ի ԵՂ. գիշերը: Պոլսոց Հայ քահանաներուն երկրպագոյնն էր, լրացուցած ըլլալով այս տարի իր քահանայութեան յիսնամեակը: Կրօնի և գրաբար լեզուի ուսուցիչ եղած է թաղին վարժարանին մէջ, և ժամանակ մը հրատարակած է Թոնչիկի թերթը, որ յետոյ փոխանցուած է Ալէաթեան Ս.ի: Յուզարկաւորութիւնը կատարուեցան Ծր. օրը, վաչկուոյ հանդիսաւորութեամբ:

**ՅԱՌԱՋԻՒԹՅԱՆ ԹԻՒՌՈՎ**  
**ԱՍՏՈՒԱԲԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԵԱՐԺՈՒՄԸ**  
**Ծագումը, Անունը, ՄԷրօքը**

Մեր համալսարանական արտուական աշխատակից ՏԻՍՐ ԴԲ. ՍՄԻՍՅԵԱՆԷ:

\* Նիւթերու առատութեան պատճառով յառաջիկայ թիւին մնաց Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ «Առ Առաջնորդ» թուղթին մնացորդը, և մեր յոյժ հետաքրքրալար թերթին շարունակութիւնը: